ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի մայիսի 26-ին

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

~~Սույն օրենքը կարգավորում է ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման, շրջանառության, մարման, արժեթղթավորման *ֆոնդերի* հիմնադրամների ստեղծման, գործունեության կարգավորման, արժեթղթավորման *ֆոնդերի* հիմնադրամների գործունեության դադարեցման, սնանկության, լուծարման, արժեթղթավորման *ֆոնդերի* հիմնադրամների կառավարիչների գործունեության, ինչպես նաև արժեթղթավորման գործընթացի նկատմամբ վերահսկողության հետ կապված հարաբերությունները:~~

1.Սույն օրենքը կարգավորում է ակտիվների արժեթղթավորման գործընթացի և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման, շրջանառության եւ մարման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Արժեթղթավորման իրավական կարգավորումը

~~1. Ակտիվների արժեթղթավորման հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:~~

**Ակտիվների արժեթղթավորման հարաբերությունները կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, եթե սույն օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:*

2 . Սույն օրենքը չի սահմանափակում անձի իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և կարգով թողարկել ակտիվների գրավով կամ այլ կերպ ապահովված արժեթղթեր:

**Արժեթղթավորման ֆոնդերի իրավական կարգավիճակի, ստեղծման, գործունեության կարգավորման, արժեթղթավորման ֆոնդերի գործունեության դադարեցման, սնանկության, լուծարման, արժեթղթավորման ֆոնդերի կառավարիչների գործունեության, ինչպես նաև արժեթղթավորման գործընթացի նկատմամբ վերահսկողության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:*

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

ակտիվներ՝ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ակտիվներից այնպիսի դրամական միջոցներ և (կամ) դրանց նկատմամբ պահանջի իրավունքներ և (կամ) այլ ֆինանսական ակտիվներ, որոնք ապահովում են կամ կարող են ապահովել որոշակի դրամական ներհոսքեր.

~~*ակտիվներով ապահովված արժեթղթեր՝ արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի կողմից սույն օրենքին համապատասխան թողարկված արժեթղթեր, որոնք ապահովված են ակտիվների խմբով, և որոնց դիմաց վճարումները գլխավորապես կախված են ակտիվների խմբի մեջ մտնող ակտիվների դիմաց ստացվելիք վճարներից.*~~

ակտիվներով ապահովված արժեթղթեր՝ արժեթղթավորման ֆոնդի կողմից սույն օրենքին համապատասխան թողարկված արժեթղթեր, որոնք ապահովված են ակտիվների համախմբով և որոնց գինը կամ դրանցով ստացվող եկամուտները կախված են ձեռք բերված ակտիվներից կամ ստանձնած ռիսկերից:

ակտիվներով ապահովված արժեթղթերի ապահովման միջոցներ (ակտիվների խումբ)՝ ակտիվների համախումբ, որն ապահովում է այդ ակտիվներով ապահովված արժեթղթերի ~~*մեկ*~~ թողարկումը.

վարկային գրավչություն՝ սույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված միջոցներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու ակտիվներով ապահովված արժեթղթերի իրացվելիությունը, ինչպես նաև այդ արժեթղթերի սեփականատերերի նկատմամբ պարտավորությունների կատարման հավանականությունը.

~~**պարտապան՝ ցանկացած անձ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն արժեթղթավորման *ֆոնդին* հիմնադրամին ակտիվների գծով վճարում կատարելու պայմանագրային պարտավորություն ունի.**~~

~~**թողարկող՝ արժեթղթավորման *ֆոնդ* հիմնադրամ, որն արժեթուղթ է թողարկում (թողարկել) կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում.**~~

ներդրող՝ անձ, որին պատկանում է ակտիվներով ապահովված արժեթուղթը, կամ որը նախատեսում է ձեռք բերել ակտիվներով ապահովված արժեթուղթ.

ներդրողների լիազոր ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից նշանակված անձ, որը սույն օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է ապահովման միջոց հանդիսացող ակտիվների կառավարումը.

նախաձեռնող՝ ակտիվների սկզբնական պարտատեր, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վաճառում է ակտիվներն արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~.

մասնակցության վկայագիր՝ ոչ բաժնային անվանական, ձայնի իրավունք չտվող ներդրումային արժեթուղթ, որն իր տիրապետողին տվյալ ակտիվների խմբից ստացվող եկամուտներում, այլ ստացվելիք վճարներում, ինչպես նաև այդ ակտիվների իրացումից ստացված միջոցներում փայի իրավունք է տալիս.

~~**մնացորդային արժեք՝ ակտիվների խմբի մնացորդային արժեք, որն իրենից ներկայացնում է արժեթղթավորման *ֆոնդի հիմնադ*ամի՝ ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումից բխող պարտավորությունների կատարումից հետո մնացած եկամուտների, ակտիվների իրացումից ստացված և (կամ) ստացվելիք միջոցների կամ դրանց գծով այլ վճարների հանրագումարը.**~~

~~***արժեթղթավորում՝ գործընթաց, որի միջոցով նախաձեռնողը կամ վաճառողն արժեթղթավորման հիմնադրամին վաճառում է ակտիվներ՝ արժեթղթավորման ֆոնդին հիմնադրամին փոխանցելով այդ ակտիվների նկատմամբ փոխանցման համար անհրաժեշտ բոլոր իրավունքները, իսկ արժեթղթավորման ֆոնդը հիմնադրամը թողարկում է արժեթղթեր՝ ապահովված գնված ակտիվներով և այդ ակտիվներից ստացվող վճարներով.***~~

արժեթղթավորում՝ գործարք կամ գործընթաց, որով արժեթղթավորման ֆոնդը ձեռք է բերում ակտիվ, պարտատոմս կամ այլ դեբիտորական պարտքեր, ակտիվների համախումբ կամ ստանձնում դրա (դրանց) հետ կապված ռիսկեր, և թողարկում արժեթղթեր, որոնց գինը կամ դրանցով ստացվող եկամուտները կախված են ձեռքբերված ակտիվներից կամ ստանձնած ռիսկերից:

ռիսկի ստանձնում՝ ակտիվի հետ կապված վարկային ռիսկի ստանձնումը՝ երաշխիքի տրամադրման կամ ածանցյալ գործիքի միջոցով կամ օրենքով թույլատրելի այլ միջոցներով.

վաճառող՝ անձ, որն արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ է վաճառում տարբեր նախաձեռնողներից ձեռք բերված ակտիվները: Վաճառող կարող է լինել նախաձեռնողը կամ բանկը, վարկային կազմակերպությունը, ներդրումային ընկերությունը.

սպասարկող՝ բանկ կամ վարկային կազմակերպություն կամ սույն օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող այլ առևտրային կազմակերպություն, որն իրականացնում է ակտիվների գծով վճարումների հավաքագրումը և հաշվառումը, դրանց փոխանցումն արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ կամ մատուցում է սպասարկման պայմանագրով նախատեսված՝ ակտիվների հետ կապված այլ ծառայություններ, որոնք չեն հանդիսանում սույն օրենքով արժեթղթավորման ***ֆոնդի*** ~~հիմնադրամի~~ կառավարչին և պահառուին վերապահված լիազորություններ:

Որպես սպասարկող կարող են հանդես գալ նաև նախաձեռնողը կամ վաճառողը:

Սպասարկման գործընթացում կարող են ընդգրկված լինել՝

1) գլխավոր կամ հիմնական սպասարկողը, որը պատասխանատու է ակտիվների ամբողջ խմբի համար, և

որին հաշվետու են տարբեր ենթասպասարկողներ.

2) ենթասպասարկողը, որը պատասխանատու է ակտիվների խմբի մեջ մտնող ակտիվների մի մասի համար, և որը հաշվետու է գլխավոր սպասարկողին.

3) փոխարինող սպասարկողը, որը ստանձնում է արժեթղթավորման ***ֆոնդի*** ~~հիմնադրամի~~ հետ կնքված սպասարկման պայմանագրից բխող պարտավորություններն այն դեպքում, երբ գլխավոր սպասարկողի հետ կնքված սպասարկման պայմանագիրը դադարեցվում է, կամ վերջինս չի իրականացնում պայմանագրով ստանձնած պարտավորությունները.

արժեթղթավորման ֆոնդ՝ «Ներդումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված արժեթղթավորման ֆոնդը.

~~*պահառու՝ Կենտրոնական դեպոզիտարիա.*~~

~~*արժեթղթավորման ֆոնդ հիմնադրամ՝ ոչ առևտրային կազմակերպություն, որն ստեղծվում և գրանցվում է որպես արժեթղթավորման ֆոնդ հիմնադրամ՝ սույն օրենքին համապատասխան.*~~

~~*Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի կառավարիչ՝ առևտրային կազմակերպություն, որը սույն օրենքով սահմանված կարգով իրականացնում է արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի կառավարումը.*~~

2. Սույն օրենքով սահմանված այլ հասկացությունները կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով «***Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով*** և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով:

Գ Լ Ո Ւ Խ 2

ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԸ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՅՈՒՍ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

~~*Հոդված 4. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի իրավական կարգավիճակը*~~

~~*1. Արժեթղթավորման ֆոնդը հիմնադրամը սույն օրենքին համապատասխան ստեղծված և բացառապես արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման նպատակ հետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է:*~~

~~*2. Արժեթղթավորման ֆոնդը հիմնադրամն ստեղծված է համարվում սույն օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից գրանցման օրվանից:*~~

~~*3. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի անվանումը պետք է ներառի «Արժեթղթավորման ֆոնդ հիմնադրամ» բառը և չպետք է պարունակի նախաձեռնողի կամ վաճառողի անվանումները:*~~

~~*4. «Արժեթղթավորման ֆոնդ հիմնադրամ» բառակապակցությունը կամ դրա ածանցյալներն իրենց անվանման մեջ կարող են օգտագործել միայն Կենտրոնական բանկում համապատասխան գրանցում ունեցող անձինք, դրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոհիշյալ բառակապակցության օգտագործման իրավունքը վերապահվել է օրենքով կամ միջազգային պայմանագրով կամ եթե «Արժեթղթավորման ֆոնդ հիմնադրամ » բառակապակցության օգտագործման իմաստից բխում է, որ խոսքն արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի՝ սույն օրենքով սահմանված գործունեությանը չի վերաբերում:*~~

~~*5. Արժեթղթավորման ֆոնդերն հիմնադրամներն իրավունք չունեն իրենց անվանման մեջ ապակողմնորոշող այնպիսի բառեր օգտագործելու, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի ֆինանսական վիճակի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:*~~

~~*6. Արգելվում է Կենտրոնական բանկում համապատասխան գրանցում չունեցող անձանց կողմից «Արժեթղթավորման ֆոնդ հիմնադրամ» բառակապակցության կամ դրա ածանցյալների օգտագործումը գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ որևէ կերպ աշակցելը գովազդելուն, եթե «Արժեթղթավորման ֆոնդ հիմնադրամ » բառակապակցության կամ դրա ածանցյալների օգտագործումից ենթադրվում է, որ խոսքը վերաբերում է արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի՝ սույն օրենքով սահմանված գործունեությանը:*~~

~~*Հոդված 5. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի գույքը*~~

~~*1. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի հիմնադրամի գույք կարող են լինել՝*~~

~~*1) հիմնադրի (հիմնադիրների) կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական ներդրումները.*~~

~~*2) արժեթղթերի թողարկման համար ձեռք բերված ակտիվները.*~~

3) սույն օրենքով սահմանված այլ միջոցներ:

Հիմնադրի կողմից արժեթղթավորման ֆոնդին հիմնադրամին հանձնված գույքն արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի սեփականությունն է:

Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի գույքն օգտագործվում է բացառապես իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով և չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամների, արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի կառավարչի, ապասարկողի, պահառուի, բացառությամբ հիմնադիրների, արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամների և արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի կառավարչի՝ իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման, ինչպես նաև այն դեպքերի, երբ վերջիններս հանդիսանում են արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի կողմից թողարկված և այդ ակտիվներով ապահովված արժեթղթերի սեփականատերեր:

Հոդված 6. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի ծախսերը

1. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի ծախսերն են՝

1) կանոնադրությամբ ամրագրված նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը.

2) ապասարկման պայմանագրերով և արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամների և արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի կառավարչի պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերը:

2. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի ծախսերը չեն կարող գերազանցել արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի գույքի, այդ թվում՝ արժեթղթավորման համար ձեռք բերված ակտիվներից ստացվելիք միջոցների և ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով պարտավորությունների տարբերության գումարը, որոնք հաշվարկվում են յուրաքանչյուր տարվա համար:

Հոդված 7. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի պարտավորությունները

1. Արժեթղթավորման *ֆոնդը* հիմնադրամը, ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով պարտավորություններից բացի, չի կարող ունենալ այլ պարտավորություններ, բացառությամբ նախաձեռնողի կամ վաճառողի հանդեպ ակտիվների ձեռքբերման կապակցությամբ միջոցների վճարման պարտավորության, ածանցյալ ֆինանսական գործիքների գծով պարտավորությունների և սույն օրենքով թույլատրված՝ ծառայությունների մատուցման պայմանագրերից բխող պարտավորությունների:

(7-րդ հոդվածը փոփ. 27.10.16 ՀՕ-199-Ն)

Հոդված 8. Արժեթղթավորման ֆոնդի հիմնադրամի ստեղծումը

1. Արժեթղթավորման ֆոնդը հիմնադրամն ստեղծվում է հիմնադրման միջոցով:

Արժեթղթավորման հիմնադրամի հիմնադիրներ կարող են լինել իրավաբանական անձինք, այդ թվում՝ նախաձեռնողները կամ վաճառողները, ինչպես նաև առևտրային այլ կազմակերպություններ:

2. Արժեթղթավորման հիմնադրամը չի կարող վերակազմակերպվել:

3. Արժեթղթավորման հիմնադրամը չի կարող աշխատողներ ունենալ: Արժեթղթավորման գործառնությունների իրականացման, այդ թվում՝ ակտիվների կառավարման համար արժեթղթավորման հիմնադրամը համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրեր է կնքում երրորդ անձանց հետ, որոնց թվում կարող են լինել ապասարկողը, նախաձեռնողը, վաճառողը, արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը, պահառուն:

Հոդված 9. Արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությունը

1. Արժեթղթավորման հիմնադրամի հիմնադիր փաստաթուղթն արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությունն է, որը սահմանում է՝

1) արժեթղթավորման հիմնադրամի անվանումը.

2) արժեթղթավորման հիմնադրամի գտնվելու վայրը.

3) տեղեկություններ հիմնադրի (հիմնադիրների) մասին՝ հիմնադիրների լրիվ ֆիրմային անվանումը, պետական գրանցման տվյալները, գտնվելու վայրը.

4) արժեթղթավորման հիմնադրամի սկզբնական գույքի արժեքը, դրա ձևավորման աղբյուրները, այդ թվում՝

~~յուրաքանչյուր հիմնադրի ներդրման չափը.~~

~~5) արժեթղթավորման հիմնադրամի ծախսերի ուղղությունները, դրանց գումարային մեծությունները.~~

~~6) արժեթղթավորման հիմնադրամի գույքի տնօրինման և կառավարման կարգը.~~

~~7) արժեթղթավորման հիմնադրամի մարմինների կազմավորման կարգը, քանակական կազմը և իրավասությունները, նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը.~~

~~8) արժեթղթավորման հիմնադրամի լուծարման կարգը.~~

~~9) այլ դրույթներ, որոնք չեն հակասում սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:~~

~~2. Արժեթղթավորման հիմնադրամը պարտավոր է Կենտրոնական բանկի գրանցմանը ներկայացնել իր կանոնադրությունում կատարված փոփոխությունները՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և ձևով:~~

~~3. Կենտրոնական բանկը սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փոփոխությունների գրանցման համար սահմանված փաստաթղթերն ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, գրանցում է կատարված փոփոխությունները կամ մերժում դրանց գրանցումը:~~

~~Սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետը Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող է կասեցվել Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, բայց ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում կատարված փոփոխությունների գրանցումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում փոփոխությունները համարվում են գրանցված:~~

~~4. Կենտրոնական բանկը գրանցում է փոփոխությունները, եթե դրանք չեն հակասում օրենքներին և այլ իրավական ակտերին և ներկայացվել են Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ձևով:~~

~~5. Սույն հոդվածով նախատեսված փոփոխություններն ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի կողմից դրանք գրանցելու պահից:~~

~~Հոդված 10. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարման մարմինները~~

~~1. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարման մարմիններն են՝~~

~~1) տնօրենների խորհուրդը, որն արժեթղթավորման հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմին է.~~

~~2) արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը, որն իրականացնում է արժեթղթավորման հիմնադրամի գործունեության ընթացիկ կառավարումը:~~

~~Հոդված 11. Արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհուրդը~~

~~1. Արժեթղթերի հիմնադրամի տնօրենների խորհրդի (այսուհետ՝ տնօրենների խորհուրդ) անդամների թիվը սահմանվում է արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությամբ, սակայն չի կարող երեք հոգուց պակաս լինել:~~

~~2. Տնօրենների խորհրդի անդամները նշանակվում են հիմնադիրների կողմից՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ: Տնօրենների խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:~~

~~Տնօրենների խորհրդի անդամ չի կարող լինել՝~~

~~1) հիմնադիրների ղեկավարը կամ մասնակիցը.~~

~~2) դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունեցող անձը.~~

~~3) օրինական ուժի մեջ մտած դատավճռով ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձը.~~

~~4) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձը.~~

~~5) հիմնադրի հետ փոխկապակցված անձը:~~

~~3. Տնօրենների խորհրդի անդամների համար կարող են սահմանվել պարգևավճար և (կամ) փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են տնօրենների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարգևավճարի և (կամ) փոխհատուցման չափն ու վճարման կարգը սահմանվում են արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությամբ:~~

~~4. Տնօրենների խորհրդի անդամները նշանակվում են արժեթղթավորման հիմնադրամի գործունեության ժամկետով: Տնօրենների խորհրդի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Կենտրոնական բանկի որոշմամբ՝ լիազորությունների իրականացման ընթացքում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի ի հայտ գալու դեպքում, տնօրենների խորհրդի անդամի դիմումի հիման վրա կամ տնօրենների խորհրդի անդամի մահվան դեպքում:~~

~~Տնօրենների խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում տնօրենների~~

~~խորհուրդը պարտավոր է Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելու կամ տնօրենների խորհրդի անդամի մահվան օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել տնօրենների խորհրդի նոր անդամի թեկնածություն: Եթե տնօրենների խորհուրդն իր կազմով իրավազոր չէ որոշում կայացնելու, ապա տնօրենների խորհրդի նոր անդամի թեկնածությունը ներկայացնում է արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը:~~

~~Հոդված 12. Տնօրենների խորհրդի նախագահը~~

~~1. Տնօրենների խորհրդի նախագահն ընտրվում է տնօրենների խորհրդի կողմից՝ տնօրենների խորհրդի անդամների կազմից:~~

~~Տնօրենների խորհրդի նախագահը՝~~

~~1) կազմակերպում է տնօրենների խորհրդի աշխատանքները.~~

~~2) գումարում և նախագահում է տնօրենների խորհրդի նիստերը.~~

~~3) կազմակերպում է տնօրենների խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը:~~

~~Հոդված 13. Տնօրենների խորհրդի նիստերը~~

~~1. Տնօրենների խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երեք ամիսը մեկ: Նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությամբ:~~

~~Տնօրենների խորհրդի նիստերը գումարում է տնօրենների խորհրդի նախագահը՝ իր, տնօրենների խորհրդի անդամի, արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի, արտաքին աուդիտն իրականացնող անձի գրավոր պահանջով:~~

~~2. Տնօրենների խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն: Տնօրենների խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:~~

~~3. Տնօրենների խորհրդի նիստերի քվորումը սահմանվում է արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությամբ, բայց չի կարող տնօրենների խորհրդի անդամների կեսից պակաս լինել: Տնօրենների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա տնօրենների խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:~~

~~Քվեարկության ժամանակ տնօրենների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ տնօրենների խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում տնօրենների խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:~~

~~4. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը մասնակցում է տնօրենների խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:~~

~~5. Տնօրենների խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում: Արձանագրությունում նշվում են՝~~

~~1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.~~

~~2) նիստին մասնակցած անձինք.~~

~~3) նիստի օրակարգը.~~

~~4) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած տնօրենների խորհրդի յուրաքանչյուր անդամի.~~

~~5) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ տնօրենների խորհրդի անդամների և տնօրենների խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.~~

~~6) նիստում ընդունված որոշումները:~~

~~Տնօրենների խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:~~

~~Տնօրենների խորհրդի նիստերը վարում և որոշումներն ստորագրում է տնօրենների խորհրդի նախագահը: Տնօրենների խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:~~

~~*Հոդված 14.* *Տնօրենների խորհրդի իրավասությունները*~~

~~*1. Տնօրենների խորհուրդը՝*~~

~~*1) հաստատում է արժեթղթավորման հիմնադրամի գործունեությունը կարգավորող ներքին ակտերը.*~~

~~*2) որոշում է ակտիվների կառավարման սահմանափակումները.*~~

~~*3) իրականացնում է արժեթղթավորման հիմնադրամի ընթացիկ և ֆինանսատնտեսական գործունեության, ինչպես նաև իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.*~~

~~*4) կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ լսում է արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի հաշվետվությունները.*~~

~~*5) ընտրում և ազատում է արժեթղթավորման հիմնադրամի կառավարչին.*~~

~~*6) ընտրում է արժեթղթավորման հիմնադրամի աուդիտ իրականացնող անձին.*~~

~~*7) հաստատում է արժեթղթավորման հիմնադրամի բյուջեն, արժեթղթավորման հիմնադրամի տարեկան ֆինանսական և այլ հաշվետվությունները.*~~

~~*8) տնօրենների խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ Կենտրոնական բանկի սահմանված կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում տնօրենների խորհրդի նոր անդամի թեկնածությունը.*~~

~~*9) իրականացնում է կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:*~~

~~*Տնօրենների խորհրդի իրավասությունները չեն կարող փոխանցվել այլ մարմնի:*~~

~~*Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի հետ լիազորությունների պատվիրակման պայմանագիր է կնքում տնօրենների խորհրդի նախագահը:*~~

~~*Հոդված 15.* *Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը*~~

~~*1. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը նախաձեռնող, վաճառող կամ սպասարկող չհանդիսացող ներդրումային ընկերություն է, որն իրականացնում է արժեթղթավորման հիմնադրամի գործունեության ընթացիկ կառավարումը:*~~

~~*2. Կենտրոնական բանկը նորմատիվ իրավական ակտով սահմանում է արժեթղթավորման հիմնադրամի կառավարչին և նրա գործունեությանը ներկայացվող պահանջները:*~~

~~*3. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի իրավասությանն են պատկանում արժեթղթավորման հիմնադրամի գործունեության ընթացիկ կառավարման լիազորությունները, բացառությամբ սույն օրենքով և կանոնադրությամբ տնօրենների խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:*~~

Հոդված 16. Արժեթղթավորման *ֆոնդի* ~~հիմնադրամի~~ կառավարչի իրավասությունները

1. Արժեթղթավորման *ֆոնդի* ~~հիմնադրամի~~ կառավարիչը *, ի լրումն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավասությունների, ունի նաև հետևյալ իրավասությունները՝*

1) ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման նպատակով ձեռք է բերում ակտիվներ.

2) թողարկում է ակտիվներով ապահովված արժեթղթեր.

3) իրականացնում է ակտիվների կառավարումը.

4) ակտիվների և ակտիվներով ապահովված արժեթղթերի սպասարկման նպատակով կնքում է ծառայությունների մատուցման պայմանագրեր.

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրելի ցանկացած գործողություն, որ անհրաժեշտ է սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերում նշված իրավասությունների իրականացման համար:

2. Արժեթղթավորման *ֆոնդի* ~~հիմնադրամի~~ կառավարչին արգելվում է սույն օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և ակտիվներով ապահովված արժեթղթերի ազդագրով չնախատեսված գործառնությունների իրականացումը:

3. Արժեթղթավորման *ֆոնդի* ~~հիմնադրամի~~ կառավարիչը կարող է կնքել ածանցյալ ֆինանսական գործիքներ բացառապես ակտիվների խմբի իրացվելիության ապահովման և ակտիվների խմբի մեջ մտնող ակտիվների սկզբնական արժեքի պահպանման նպատակով:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել արժեթղթավորման *ֆոնդի* ~~հիմնադրամի~~ կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները և ածանցյալ ֆինանսական գործիքներում ներդրումների առավելագույն չափը:

(16-րդ հոդվածը խմբ. 27.10.16 ՀՕ-199-Ն)

~~Հոդված 17. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի և տնօրենների խորհրդի պատասխանատվությունը~~

~~1. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը, տնօրենների խորհրդի անդամներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր են գործել՝ ելնելով ակտիվներով ապահովված արժեթղթերի ներդրողների շահերից, իրականացնել իրենց իրավունքները և կատարել ներդրողների նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով (ֆիդուցիար պարտականություն):~~

~~2. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը պատասխանատվություն է կրում արժեթղթավորման հիմնադրամին ներկայացված պահանջների համար, եթե չի ապացուցում, որ դրանք առաջացել են տնօրենների խորհրդի և (կամ) անդամների կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով:~~

~~3. Երրորդ անձինք, բացառությամբ ներդրողների և արժեթղթավորման հիմնադրամի հետ սույն օրենքի համաձայն կնքված պայմանագրերի կողմերի, չեն կարող արժեթղթավորման հիմնադրամի ակտիվների նկատմամբ պահանջներ ներկայացնել մինչև ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով պարտավորությունների ամբողջությամբ կատարումը, եթե՝~~

~~1) ակտիվների վաճառքն արժեթղթավորման հիմնադրամին կատարվել է շուկայական գնով.~~

~~2) արժեթղթավորման հիմնադրամին սույն օրենքով սահմանված կարգով փոխանցվել է ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը.~~

~~3) նախաձեռնողը կամ վաճառողն իրավասու չեն փոխանցելու, գրավադրելու, փոխարինելու, հետ ստանալու, հետ գնելու կամ այլ կերպ օգտագործելու ակտիվները կամ դրանցից ստացվող միջոցները՝ առանց ակտիվներով ապահովված արժեթղթերի սեփականատերերի համաձայնության:~~

Հոդված 17. Արժեթղթավորման ֆոնդի ակտիվների նկատմամբ պահանջներ

Երրորդ անձինք, բացառությամբ ներդրողների և արժեթղթավորման ֆոնդի հետ սույն օրենքի համաձայն կնքված պայմանագրերի կողմերի, չեն կարող արժեթղթավորման ֆոնդի ակտիվների նկատմամբ պահանջներ ներկայացնել մինչև ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով պարտավորությունների ամբողջությամբ կատարումը, եթե՝

1) ակտիվների վաճառքն արժեթղթավորման ֆոնդին կատարվել է շուկայական գնով.

2) արժեթղթավորման ֆոնդին սույն օրենքով սահմանված կարգով փոխանցվել է ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը.

3) նախաձեռնողը կամ վաճառողն իրավասու չեն փոխանցելու, գրավադրելու, փոխարինելու, հետ ստանալու, հետ գնելու կամ այլ կերպ օգտագործելու ակտիվները կամ դրանցից ստացվող միջոցները՝ առանց ակտիվներով ապահովված արժեթղթերի սեփականատերերի համաձայնության:

~~Հոդված 18. Արժեթղթավորման հիմնադրամի գրանցումը~~

~~1. Արժեթղթավորման հիմնադրամը գրանցման համար Կենտրոնական բանկ է ներկայացնում՝~~

~~1) դիմում՝ ստորագրված հիմնադրի (հիմնադիրների) կողմից.~~

~~2) արժեթղթավորման հիմնադրամի ստեղծման և կանոնադրության հաստատման վերաբերյալ հիմնադրի որոշումը կամ հիմնադիրների ժողովի արձանագրությունը.~~

~~3) արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրության առնվազն երեք օրինակ՝ հաստատված հիմնադրի կամ հիմնադիրների ժողովի կողմից.~~

~~4) արժեթղթավորման հիմնադրամի գործունեության տնտեսական ծրագիրը.~~

~~5) տնօրենների խորհրդի անդամների հետ հիմնադիրների կնքած պայմանագրերը և խորհրդի անդամների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթուղթը, որի ձևը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով.~~

~~6) գրանցման պետական տուրքի վճարման անդորրագիրը.~~

~~7) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:~~

*~~2. Կենտրոնական բանկը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերն ստանալու պահից մեկամսյա~~

~~ժամկետում գրանցում է արժեթղթավորման հիմնադրամը կամ մերժում է գրանցումը:~~

~~3. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող տեղեկությունները ճշտելու նպատակով գրանցման դիմումի մեկամսյա ժամկետը կարող է կասեցվել մինչև այդ տեղեկությունների ստացումը:~~

~~4. Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին հիմնադիրներին չտեղեկացնելու դեպքում հիմնադրամը համարվում է գրանցված:~~

~~5. Կենտրոնական բանկի խորհուրդն արժեթղթավորման հիմնադրամի գրանցման մասին որոշում ընդունելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հիմնադիրներին տալիս է գրանցման վկայական:~~

~~6. Արժեթղթավորման հիմնադրամի գրանցման մասին որոշում ընդունելուց հետո Կենտրոնական բանկն այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմնին՝ վերջինիս կողմից արժեթղթավորման հիմնադրամի գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:~~

–

~~Հոդված 19. Արժեթղթավորման հիմնադրամի գրանցման մերժման հիմքերը~~

–

~~1. Կենտրոնական բանկը մերժում է արժեթղթավորման հիմնադրամի գրանցումը, եթե՝~~

~~1) խախտված է արժեթղթավորման հիմնադրամի կազմավորման՝ սույն օրենքով սահմանված կարգը.~~

~~2) արժեթղթավորման հիմնադրամի կանոնադրությունը հակասում է օրենքին.~~

~~3) չեն ներկայացվել կամ թերի են ներկայացվել գրանցման համար անհրաժեշտ՝ սույն օրենքով և սույն օրենքի հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված փաստաթղթերը.~~

~~4) ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ.~~

~~5) արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամների մասնագիտական գիտելիքները և (կամ) որակավորումը չեն համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներին.~~

~~6) արժեթղթավորման հիմնադրամի հիմնադիրը անվճարունակ կամ սնանկ է կամ գտնվում է լուծարման կամ ինքնալուծարման գործընթացում.~~

~~7) արժեթղթավորման հիմնադրամի հիմնադիրը նախորդ հաշվետու տարվա ընթացքում խախտել է իր գործունեության նկատմամբ սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներով արժեթղթավորման հիմնադրամի ստեղծումը կհանգեցնի հիմնադրի ֆինանսական վիճակի վատթարացմանը.~~

~~8) հիմնադրի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափից:~~

Հոդված 20. Նախաձեռնողը և վաճառողը

1. Նախաձեռնողը կարող է ուղղակիորեն կամ վաճառողի միջոցով վաճառել ակտիվները արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~:

Վաճառողի առկայության դեպքում վաճառողը գնում է ակտիվները նախաձեռնողից՝ արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ վաճառելու նպատակով:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանվում են վաճառողին և նրա գործունեությանը ներկայացվող պահանջները:

3. Նախաձեռնողը կամ վաճառողն իրավունք ունեն՝

1) երաշխիքներ տալու ակտիվների որակի վերաբերյալ և պարտավորություն ստանձնելու՝ հետ գնել կամ փոխարինել երաշխիքում նշված որակական չափանիշներին չհամապատասխանող ակտիվները.

2) հանդես գալու որպես ակտիվների սպասարկող կամ արժեթղթավորման ***ֆոնդի*** ~~հիմնադրամի~~ հետ շուկայական պայմաններով կնքելու ծառայությունների մատուցման այլ պայմանագրեր.

3) սույն օրենքի համաձայն՝ տրամադրելու վարկային գրավչության միջոցներ:

Հոդված 21. Սպասարկողը

1. Սպասարկողը պարտավոր է կատարել իր պարտականություններն սպասարկման պայմանագրի դրույթներին համապատասխան:

2. Սպասարկողն իր պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր է գործել՝ ելնելով ակտիվներով ապահովված արժեթղթերի ներդրողների շահերից, իրականացնել իր իրավունքները և կատարել

ներդրողների նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով (ֆիդուցիար պարտականություն):

3. Սպասարկման պայմանագրով պետք է նախատեսվեն՝

1) ակտիվների առանձնացումն սպասարկողի այլ ակտիվներից և դրանց գծով առանձին հաշվապահական հաշվառում վարելու սպասարկողի պարտականությունը.

2) յուրաքանչյուր ակտիվների խմբի կամ յուրաքանչյուր խմբի մեջ մտնող ակտիվների մի մասի գծով ստացվելիք միջոցների համար առանձին հաշիվներ վարելու սպասարկողի պարտականությունը.

3) սպասարկողի սնանկության կամ սպասարկման պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում սպասարկման պայմանագրի դադարեցումը արժեթղթավորման ***ֆոնդի*** ~~հիմնադրամի~~ նախաձեռնությամբ և փոխարինող սպասարկողի նշանակումը.

4) սպասարկման պայմանագրի դադարեցման դեպքում սպասարկողի կողմից արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ կամ նրա նշանակած փոխարինող սպասարկողին ակտիվների հետ կապված էլեկտրոնային և (կամ) փաստաթղթային տեսքով բոլոր գրառումների և փաստաթղթերի տրամադրումը, ակտիվների գծով ստացված կանխիկ գումարների և հաշիվների՝ առանց որևէ հաշվանցի փոխանցումը.

5) սպասարկողի կողմից սպասարկման պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն այնքան ժամանակ, քանի դեռ փոխարինող սպասարկող չի նշանակվել.

6) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ պահանջներ:

4. Սպասարկման ծառայությունների մատուցումը կարող է հատուցելի գործարք լինել:

5. Արժեթղթավորման ***ֆոնդը*** ~~հիմնադրամը~~ փոխարինող սպասարկող նշանակելու դեպքում պարտավոր է վերջինիս տրամադրել բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նրան սպասարկման պայմանագրով գլխավոր սպասարկողի պարտավորությունները ստանձնելու համար:

6. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող են սահմանվել սպասարկողին և նրա գործունեությանը ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

Գ Լ Ո Ւ Խ 3

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Հոդված 22. Ակտիվների վաճառքը արժեթղթավորման *ֆոնդին* ~~հիմնադրամին~~

1. Սույն օրենքի իմաստով ակտիվների վաճառք է համարվում նախաձեռնողի կամ վաճառողի կողմից արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ ակտիվների վաճառքը՝ դրա դիմաց անմիջապես կամ արժեթղթերի տեղաբաշխումից հետո վճարում ստանալու պայմանով:

2. Արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ ակտիվների վաճառքը ներառում է ակտիվների, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր պայմանագրերի, իրավունքների, գրավի, հիփոթեքի և պարտավորությունների կատարման ապահովման այլ միջոցների, ներառյալ՝ երաշխիքների փոխանցումն արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~:

3. Ակտիվների վաճառքի պայմանագիրը պետք է պարունակի դրույթ, համաձայն որի՝ ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է փոխանցված արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ ՝ ակտիվների փոխանցման ակտի ստորագրման պահից, անկախ ակտիվների ձեռքբերման համար վճարման կատարման ժամկետներից: Եթե ակտիվների վաճառքը ենթադրում է նաև անշարժ գույքի հետ կապված իրավունքների փոխանցում, ապա ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է փոխանցված արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ ՝ այդ իրավունքի պետական գրանցման պահից:

4. Նախաձեռնողը կամ վաճառողը պարտավոր են տեղեկացնել պարտապաններին՝ արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ ակտիվների վաճառքի մասին:

5. Ակտիվների վաճառքի պայմանագրի կնքման օրվա դրությամբ նախաձեռնողը կամ վաճառողը չպետք է ընդգրկված լինի անվճարունակության, սնանկության, լուծարման կամ ինքնալուծարման գործընթացներում:

Հոդված 23. Ակտիվների խմբում ընդգրկվող ակտիվներին ներկայացվող պահանջները

1. Ակտիվների խմբում կարող են ներառվել այն ակտիվները, որոնք արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ ակտիվների վաճառքի օրվա դրությամբ ծանրաբեռնված չեն դրանց նկատմամբ երրորդ անձանց իրավունքներով ու պահանջներով և ազատ են որևէ սահմանափակումից:

2. Արժեթղթավորման ***ֆոնդի*** ~~հիմնադրամի~~ ներդրումային արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը և օգտագործումը, վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումն իրականացվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան բանկերի համար սահմանված կարգերով:

3. Դեբիտորական պարտքերի պահուստավորման պարտականությունը կրում է արժեթղթավորման գործընթացի այն մասնակիցը, որը կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն կրում է ակտիվի գծով վճարների չստացման ռիսկը: Ընդ որում, Կենտրոնական բանկի որոշմամբ կարող են սահմանվել պահուստավորման առանձնահատուկ պայմաններ՝ հաշվի առնելով կողմերի միջև կնքված պայմանագրի պայմանները:

Հոդված 24. Ակտիվների խմբի գրանցումը

1. Ակտիվների խմբի գրանցման համար արժեթղթավորման ***ֆոնդը*** ~~հիմնադրամը~~ Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

1) ակտիվներով ապահովված արժեթղթերի ապահովման միջոց հանդիսացող ակտիվների ցանկը.

2) ակտիվների ցանկում ներառված ակտիվների նկատմամբ արժեթղթավորման ***ֆոնդի*** ~~հիմնադրամի~~՝ սույն օրենքով սահմանված սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը.

3) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

2. Արժեթղթավորման ***ֆոնդն*** ~~հիմնադրամն~~ ակտիվների ցանկը ներկայացնում է Կենտրոնական բանկ՝ ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման ազդագրի հետ (եթե օրենքով սահմանված կարգով արժեթղթերի թողարկման համար պահանջվում է ազդագիր):

3. Կենտրոնական բանկը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերն ստանալու պահից քսան աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամի~~ ներկայացրած ակտիվների ցանկը կամ մերժում ակտիվների ցանկի գրանցումը: ***Կենտրոնական բանկն ակտիվների գրանցումն իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա:***

4. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող տեղեկությունները ճշտելու նպատակով գրանցման քսան աշխատանքային օրվա ժամկետը կարող է կասեցվել մինչև այդ տեղեկությունների ստացումը:

5. Կենտրոնական բանկի կողմից քսան աշխատանքային օրվա ժամկետում ակտիվների ցանկը չգրանցելու կամ այդ ժամկետը կասեցնելու մասին արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ չտեղեկացնելու դեպքում ակտիվների ցանկը համարվում է գրանցված:

6. Կենտրոնական բանկը մերժում է արժեթղթավորման ***ֆոնդի*** ~~հիմնադրամի~~ կողմից արժեթղթավորման նպատակով ներկայացված ակտիվների ցանկի գրանցումը, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերը թերի են կամ պարունակում են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ:

7. Կենտրոնական բանկի կողմից ակտիվների գրանցումը պետական գրանցում է, և ակտիվների նկատմամբ պահանջի իրավունքի որևէ այլ գրանցում չի պահանջվում:

8. Ակտիվների խմբում կատարվող փոփոխությունները՝ պայմանավորված ակտիվների փոխարինման և կամ ավելացման հետ, Կենտրոնական բանկում ենթակա են գրանցման՝ ակտիվների խմբի գրանցման համար սույն հոդվածով սահմանված կարգով:

9. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով ստեղծում է ակտիվների խմբի ռեգիստր և սահմանում շահագրգիռ անձանց կողմից ակտիվների խմբի ռեգիստրից տեղեկությունների ստացման կարգ: ***Կենտրոնական բանկը սույն հոդվածում նշված ակտիվների խմբի ռեգիստր ստեղծելու, վարելու և շահագրգիռ անձանց կողմից ակտիվների խմբի ռեգիստրից տեղեկություններ տրամադրելու գործառույթները կարող է պատվիրակման պայմանագրով պատվիրակել այլ անձի:***

Հոդված 25. Ակտիվների խմբում ներառված ակտիվների փոխարինումը կամ ավելացումը

1. Ակտիվների խմբի գրանցումից հետո ակտիվների խմբում ներառված ակտիվները կարող են փոխարինվել՝

1) եթե անհրաժեշտ է փոխարինել այն ակտիվները, որոնք չեն համապատասխանում նախաձեռնողի կամ վաճառողի կողմից արժեթղթավորման ***ֆոնդին*** ~~հիմնադրամին~~ տրված երաշխիքով սահմանված ակտիվների որակական չափանիշներին.

2) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում:

2. Ակտիվների խմբի գրանցումից հետո ակտիվների խմբում ակտիվների ավելացում կարող է տեղի ունենալ՝

1) եթե դա անհրաժեշտ է արժեթղթավորման ***ֆոնդի*** ~~հիմնադրամի~~ կողմից ակտիվների խմբի սկզբնական արժեքի նվազագույն չափը պահպանելու համար.

2) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում:

Հոդված 26. Ակտիվների խմբի գրավադրումը

1. Սույն օրենքի ուժով ակտիվների խումբը համարվում է գրավադրված՝ ի ապահովումն ակտիվներով ապահովված արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման՝ Կենտրոնական բանկի կողմից ակտիվների խումբը գրանցելու պահից:

Ակտիվների գրավադրումը ենթադրում է ակտիվների, ինչպես նաև ակտիվների նկատմամբ պահանջներից բխող բոլոր իրավունքների, ակտիվների գծով ստացվելիք եկամուտների, վճարների, առկա կամ ապագայում ստացվելիք այլ միջոցների գրավադրումը: Նման միջոցներ ու վճարումներ են ակտիվների գծով մայր գումարները, տոկոսագումարները, ապահովագրությունից ստացվելիք միջոցները, ակտիվների գծով ստացվելիք տույժերը և տուգանքները, այլ վճարները, գրավի պայմանագրերից ծագող իրավունքները, հիփոթեքային պարտատոմսերի սեփականատերերին դեռևս չվճարված գումարները:

~~***2. Ակտիվների գծով ստացված եկամուտները, վճարները և այլ միջոցներն ուղղվում են ակտիվներով ապահովված արժեթղթերով գործառնությունների և արժեթղթավորման հիմնադրամի ծախսերի իրականացմանը՝ համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված ազդագրի և կանոնադրության: Սույն դրույթը չի արգելում մասնակցության վկայագրերի վաճառքը ներդրողներին:***~~

~~***Հոդված 27. Ակտիվների խմբի մնացորդային արժեքը***~~

~~***1. Ակտիվների խմբի մնացորդային արժեքը հանդիսանում է արժեթղթավորման հիմնադրամի սեփականությունը և կարող է տնօրինվել կանոնադրությամբ և ազդագրում նշված կարգով:***~~

~~***2. Ակտիվների խմբի մնացորդային արժեքի նկատմամբ իրավունքները կարող են հանդես գալ ակտիվներով ապահովված արժեթղթերի դասի կամ դասերի տեսքով:***~~

Հոդված 27.1. Ռիսկի ստանձնում

1. Ներդրողների շահերի պաշտպանության կամ ֆինանսական կայունության կամ ֆինանսական շուկաների բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունից ելնելով Կենտրոնական բանկը նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել՝

1) ակտիվի հետ կապված ստանձնման ենթակա ռիսկի տեսակները.

2) չափանիշներ, որոնց բավարարող ռիսկերը կարող են ստանձնվել.

3) ստանձնվող ռիսկի հիման վրա թողարկվող արժեթղթերի նկատմամբ պահանջներ.

4) ակտիվի հետ կապված ռիսկի փոխանցման պայմանագրի պարտադիր պայմաններ:

Գ Լ Ո Ւ Խ 4

ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

~~**Հոդված 28. Ակտիվներով ապահովված արժեթղթերի տեսակները**~~

~~1. Ակտիվներով ապահովված արժեթղթերը կարող են լինել պարտատոմսերի և (կամ) մասնակցության վկայագրերի տեսքով:~~

Հոդված 28. Ակտիվներով ապահովված արժեթղթերը

1. Արժեթղթավորման ֆոնդը կարող է թողարկել ակտիվներով ապահովված արժեթղթեր՝ մասնակցության վկայագրերի, պարտատոմսերի, այլ պարտքային արժեթղթերի և(կամ) «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով թողարկված փայերի (բաժնետոմսերի) տեսքով:

2. Ակտիվներով ապահովված արժեթղթերի գրանցումը, թողարկումը և տեղաբաշխումը, ինչպես նաև ռեեստրի վարումն ու պահառությունն իրականացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

~~Հոդված 29. Ակտիվներով ապահովված արժեթղթերի գրանցումը, թողարկումը և տեղաբաշխումը~~

~~1. Սույն օրենքի դրույթները տարածվում են միայն սույն օրենքին համապատասխան ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի թողարկած՝ ակտիվներով ապահովված արժեթղթերի վրա:~~

~~2. Ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման հետ կապված և սույն օրենքում չներառված հարաբերությունները կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:~~

~~3. Ակտիվներով ապահովված արժեթղթերը կարող են տեղաբաշխվել փակ կամ հրապարակային տեղաբաշխումների միջոցով: Ակտիվներով ապահովված արժեթղթերը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, կարող են վաճառվել բորսայում կամ բորսայից դուրս:~~

~~4. Առանց Կենտրոնական բանկի նախնական թույլտվության նախաձեռնողին, վաճառողին արգելվում է ձեռք բերել ակտիվներով ապահովված արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման ծավալի 10 տոկոսից ավելին:~~

~~Կենտրոնական բանկի նախնական թույլտվության համար նախաձեռնողի, վաճառողի կողմից ներկայացվող փաստաթղթերը և թույլտվության տրամադրման ընթացակարգը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:~~

~~5. Կենտրոնական բանկը չի առարկում ակտիվներով ապահովված արժեթղթերի՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված չափից ավելին ձեռք բերելու գործարքին, եթե այն իրականացվում է բացառապես վարկային գրավչության նպատակով:~~

~~6. Ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով վճարումներն իրականացվում են ազդագրով սահմանված կարգով:~~

~~Հոդված 30. Ակտիվներով ապահովված արժեթղթերի ռեեստրի վարումը և պահառությունը~~

~~1. Ակտիվներով ապահովված արժեթղթերի ռեեստրի վարման և պահառության գործառույթներն իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիան:~~

~~2. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է Կենտրոնական բանկի պահանջով երկու աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկին տրամադրել տեղեկություններ՝ ակտիվներով ապահովված արժեթղթերի սեփականատերերի մասին:~~

ԳԼՈՒԽ 5

ՎԱՐԿԱՅԻՆ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 31. Վարկային գրավչության միջոցները

1. Ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով նախաձեռնողի կամ վաճառողի, ինչպես նաև այլ անձանց կողմից կարող են տրամադրվել վարկային գրավչության հետևյալ միջոցները՝

1) ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով շուկայական պայմաններով վճարման պարտավորության կատարման երաշխիքներ.

2) ակտիվներով ապահովված արժեթղթերի մայր գումարի և (կամ) տոկոսների վճարումների գծով տրվող ժամանակավոր իրացվելիության երաշխիքներ, որոնց գումարը չի կարող հավասար լինել կամ գերազանցել սույն մասի 1-ին կետում նշված երաշխիքների գումարը.

3) միևնույն թողարկման մեջ ակտիվներով ապահովված արժեթղթերի՝ ամենաստորին դասի ձեռքբերում.

4) ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով վճարումների համար պահուստի ստեղծում՝ *~~մնացորդային~~*

~~արժեքի հիման վրա~~.

5) արժեթղթավորման հիմնադրամին ակտիվների վաճառք ակտիվների գնահատված արժեքից ավելի ցածր գնով՝ հետագայում նախատեսելով այդ տարբերության վերադարձը նախաձեռնողին, վաճառողին կամ ***փայում կամ մասնակցության վկայագրում*** ~~մնացորդային արժեքում~~ ներդրողին.

6) ակտիվների ապահովագրություն.

7) Կենտրոնական բանկի կողմից նորմատիվ իրավական ակտով սահմանված կամ սույն օրենքով սահմանված կարգով թույլատրված վարկային գրավչության այլ ձևեր:

Հոդված 32. Վարկային գրավչության համար թույլտվության տրամադրումը

1. Սույն օրենքի 31-րդ հոդվածում չնշված և (կամ) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով չնախատեսված վարկային գրավչության միջոցի տրամադրման թույլտվության համար արժեթղթավորման ***ֆոնդը*** ~~հիմնադրամը~~ և վարկային գրավչություն տրամադրող անձը դիմում են Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով վարկային գրավչության միջոցի նկարագրությունը.

2) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

Կենտրոնական բանկը քսանհինգ աշխատանքային օրվա ընթացքում թույլատրում է վարկային գրավչության տրամադրումը, եթե՝

1) վարկային գրավչության միջոցը չի հակասում օրենքներին և այլ իրավական ակտերին.

2) վարկային գրավչության միջոցը չի վտանգում ներդրողների շահերը:

~~ԳԼՈՒԽ 6~~

~~ՀԱՇՎԱՊԱՀՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ~~

~~Հոդված 33. Արժեթղթավորման հիմնադրամի հաշվետվությունները~~

~~1. Արժեթղթավորման հիմնադրամը կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում եռամսյակային, տարեկան, ֆինանսական և այլ հաշվետվություններ: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանվել հաշվետվությունների ներկայացման նաև այլ պարբերականություն:~~

~~2. Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, դրանց ներկայացման և հրապարակման կարգն ու ժամկետները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:~~

~~3. Արժեթղթավորման հիմնադրամի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:~~

~~Հոդված 34. Հաշվապահական հաշվառումն արժեթղթավորման հիմնադրամում~~

~~1. Արժեթղթավորման հիմնադրամը հաշվապահական հաշվառում վարում է Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի համատեղ սահմանած կարգով՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:~~

~~2. Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը պատասխանատվություն է կրում արժեթղթավորման հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, եռամսյակային, տարեկան, ֆինանսական հաշվետվությունները սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկ ներկայացնելու, ինչպես նաև տնօրենների խորհրդին և այլ անձանց տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար:~~

~~Հոդված 35. Արժեթղթավորման գործունեության նկատմամբ վերահսկողությունը և կարգավորումը~~

~~1. Արժեթղթավորման հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողության և կարգավորման իրավասությունը պատկանում է Կենտրոնական բանկին:~~

~~2. Կենտրոնական բանկը նախաձեռնողից, վաճառողից, սպասարկողից և արժեթղթավորման գործընթացում ընդգրկված այլ անձանցից կարող է պահանջել բացատրություններ, տեղեկություններ, փաստաթղթեր: Այդ անձինք~~

պարտավոր են Կենտրոնական բանկի պահանջով նրան տրամադրել արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն:

Հոդված 36. Արժեթղթավորման հիմնադրամի արտաքին աուդիտը

1. Յուրաքանչյուր տարի արժեթղթավորման հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով արժեթղթավորման հիմնադրամը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ նաև արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Արժեթղթավորման հիմնադրամի արտաքին աուդիտին ընտրում է տնօրենների խորհուրդը՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել արժեթղթավորման հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող լրացուցիչ չափանիշներ:

2. Ցանկացած ժամանակ արժեթղթավորման հիմնադրամի արտաքին աուդիտ կարող է հրավիրվել նաև ներդրողի (ներդրողների) նախաձեռնությամբ՝ նրա միջոցների հաշվին:

3. Արժեթղթավորման հիմնադրամի արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսվի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ տնօրենների խորհրդին) կազմում: Արժեթղթավորման հիմնադրամն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև արժեթղթավորման հիմնադրամի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

4. Արժեթղթավորման հիմնադրամում աուդիտ իրականացնելու ընթացքում արտաքին աուդիտի կողմից արժեթղթավորման հիմնադրամի ֆինանսական վիճակի՝ իր կարծիքով էականորեն վատթարացման փաստեր, ինչպես նաև գործունեության հետ կապված թերություններ ու խախտումներ հայտնաբերելու դեպքում արտաքին աուդիտը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Կենտրոնական բանկին:

5. Եթե աուդիտորական եզրակացությունը և (կամ) հաշվետվությունը կազմվել է սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջների խախտմամբ, կամ աուդիտը չի իրականացվել օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ապա Կենտրոնական բանկն իրավունք ունի չընդունելու աուդիտորական եզրակացությունը և (կամ) հաշվետվությունը՝ այդ մասին տեղեկացնելով արտաքին աուդիտ իրականացնող անձին և պահանջելու արժեթղթավորման հիմնադրամի հաշվին աուդիտ իրականացնող այլ անձի կողմից նոր աուդիտ:

6. Արտաքին աուդիտի եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

7. Կենտրոնական բանկի պահանջով արտաքին աուդիտը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել արժեթղթավորման հիմնադրամի աուդիտորական ստուգման վերաբերյալ փաստաթղթերը, անգամ եթե դրանք առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք են պարունակում:

8. Սույն հոդվածով սահմանված պարտավորությունների չկատարման համար անկախ արտաքին աուդիտ իրականացնող անձը կրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Հոդված 37. Գործունեության հրապարակայնությունը

1. Արժեթղթավորման հիմնադրամը պարտավոր է կազմել, Կենտրոնական բանկ ներկայացնել և իր ինտերնետային տնային էջում հրապարակել սույն օրենքով սահմանված կարգով ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման առնչությամբ կազմված եռամսյակային հաշվետվություններ: Եռամսյակային հաշվետվությունների ձևը, ներկայացման և հրապարակման կարգը և ժամկետները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Եռամսյակային հաշվետվություններում պետք է ներառվեն հետևյալ տեղեկությունները՝

1) ապահովման միջոցների մեջ մտնող ակտիվների գումարը՝ անվանական արժեքի գումարի չափով, ապահովման միջոցներ հանդիսացող ակտիվների մնացորդային արժեքը, ինչպես նաև ապահովման միջոցների մեջ մտնող ակտիվների գումարը՝ անվանական արժեքի գումարի չափով, այդ ակտիվների գուտ ներկա արժեքը.

2) ակտիվներով ապահովված չմարված արժեթղթերի կառուցվածքը՝ ըստ ժամկետայնության, ինչպես նաև ապահովման միջոց հանդիսացող ակտիվների ֆիքսված տոկոսադրույքների ժամանակահատվածները՝ ըստ տարիների.

3) արժեթղթավորման հիմնադրամի կողմից կնքված ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները, գործարքների ընդհանուր գումարային մեծությունը.

4) ապահովման միջոցների մեջ մտնող ակտիվների տեղաբաշխումը՝

ա. ըստ ակտիվների անվանական արժեքի,

բ. եթե ակտիվը ապահովված է գրավով՝ ըստ գրավի առարկայի գտնվելու վայրի (եթե անշարժ գույք է), օգտագործման նպատակի և տեսակի.

5) ապահովման միջոցների մեջ մտնող ակտիվների գծով կատարված վճարումները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում.

6) ապահովման միջոցների մեջ մտնող ակտիվների հետ կապված իրացված անշարժ գույքի քանակը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրացման գործընթացում գտնվող անշարժ գույքի թվաքանակը.

7) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում այն դեպքերի թվաքանակը, որոնց ժամանակ արժեթղթավորման հիմնադրամը միջոցներ է ձեռնարկել գրավի առարկան իրացնելու ուղղությամբ՝ կանխելու համար վնասները.

8) 90 օր և ավելի ժամկետանց դասակարգված ակտիվները.

9) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

2. Արժեթղթավորման հիմնադրամի կողմից ներկայացվող հաշվետվությունները և տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

(37-րդ հոդվածը փոփ. 27.10.16 ՀՕ-199-Ն)

ԳԼՈՒԽ 7

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 38. Օրենսդրության խախտումների համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի, արժեթղթավորման գործընթացը կարգավորող այլ օրենքների և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման կարգը սահմանվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ԳԼՈՒԽ 8

ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Հոդված 39. Արժեթղթավորման հիմնադրամի լուծարման հիմքերը

1. Արժեթղթավորման հիմնադրամը լուծարվում է՝

1) ինքնալուծարման դեպքում՝

ա. ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով պարտավորություններն ամբողջությամբ կատարելուց հետո, եթե սույն օրենքով սահմանված կարգով երեսուն աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել ակտիվներով ապահովված արժեթղթերի նոր թողարկման ազդագիր,

բ. արժեթղթավորման հիմնադրամի կողմից կամ նախաձեռնողի կամ վաճառողի կողմից՝ սույն օրենքով թույլատրված դեպքերում ակտիվների հետգնման իրականացման դեպքում.

2) գործունեության հարկադիր դադարեցման դեպքում՝

ա. արժեթղթավորման հիմնադրամի կողմից թողարկված ակտիվներով ապահովված արժեթղթերի անվանական արժեքի 2/3-ի սեփականատեր հանդիսացող անձանց կողմից արժեթղթավորման հիմնադրամի լուծարման պահանջ ներկայացնելու դեպքում,

բ. եթե արժեթղթավորման հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ապահովման միջոց հանդիսացող ակտիվները բավարար չեն նրա գործունեության իրականացման և ստանձնած պարտավորությունների կատարման համար, և արժեթղթավորման հիմնադրամի կողմից ստանձնած պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ:

Հոդված 40. Արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարումը

1. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված հիմքերի առկայության դեպքում տնօրենների խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման մասին, եթե արժեթղթավորման հիմնադրամը ներդրողների, ծառայությունների մատուցման պայմանագրով պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման նախնական համաձայնություն ստանալու համար արժեթղթավորման հիմնադրամը Կենտրոնական բանկ է ներկայացնում արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման թույլտվություն ստանալու հայտ՝ կցելով ինքնալուծարումը հիմնավորող փաստաթղթեր, որոնց ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

3. Կենտրոնական բանկի խորհուրդը քսանհինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման թույլտվություն տալու հայտը:

4. Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման թույլտվություն տալու հայտը, եթե առկա չեն ինքնալուծարման՝ սույն օրենքով սահմանված հիմքերը:

5. Կենտրոնական բանկի կողմից արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման թույլտվությունն ստանալուց հետո արժեթղթավորման հիմնադրամը դիմում է դատարան՝ ինքնալուծարման նպատակով:

6. Դատարանը արժեթղթավորման հիմնադրամի դիմումի հիման վրա և Կենտրոնական բանկի ինքնալուծարման թույլտվության առկայության դեպքում ընդունում է արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման մասին որոշում և նշանակում լուծարային հանձնաժողով՝ սահմանելով արժեթղթավորման հիմնադրամի ինքնալուծարման կարգը և ժամկետները:

–

Հոդված 41. Արժեթղթավորման հիմնադրամի գործունեության հարկադիր դադարեցումը

–

1. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում Կենտրոնական բանկը միջոցներ է ձեռնարկում սույն հոդվածի դրույթներին համապատասխան արժեթղթավորման հիմնադրամի գործունեության հարկադիր դադարեցման և լուծարման ուղղությամբ:

2. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքերում Կենտրոնական բանկի խորհուրդը տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում որոշում է կայացնում արժեթղթավորման հիմնադրամի գործունեության հարկադիր դադարեցման մասին և նշանակում ներդրողների լիազոր ներկայացուցիչ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված որոշման կայացման պահից ներդրողների լիազոր ներկայացուցչին են անցնում արժեթղթավորման հիմնադրամի կառավարման մարմինների իրավասությունները:

4. Ներդրողների լիազոր ներկայացուցիչը իրավասու է՝

1) կառավարելու ակտիվները՝ հօգուտ ներդրողների.

2) ազատելու արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամին, անդամներին և (կամ) արժեթղթավորման հիմնադրամի կառավարչին.

3) տրամադրելու երաշխիքներ կամ վարկային գրավչության այլ ձևեր՝ հօգուտ ներդրողների.

4) դադարեցնելու արժեթղթավորման հիմնադրամի սպասարկման պայմանագրերը կամ ծառայությունների մատուցման այլ պայմանագրեր.

5) Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ նշանակելու փոխարինող սպասարկող կամ այլ ծառայություն մատուցող.

6) հանդես գալու որպես լուծարային կառավարիչ և իրականացնելու լուծարային կառավարչին՝ սույն օրենքի 42-րդ հոդվածով վերապահված լիազորությունները.

7) սույն մասի 1-6-րդ կետերում նշված գործառույթների իրականացման համար կատարելու անհրաժեշտ գործողություններ:

5. Արժեթղթավորման հիմնադրամի տնօրենների խորհրդի անդամները, արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչը և նրան ծառայություն մատուցող անձինք պարտավոր են՝

1) ներդրողների լիազոր ներկայացուցչի պահանջով նրան փոխանցել արժեթղթավորման հիմնադրամի ակտիվները, հաշիվները, փաստաթղթերը.

2) համագործակցել ներդրողների լիազոր ներկայացուցչի հետ՝ նրա կողմից իր իրավունքների և պարտականությունների իրականացման ընթացքում.

3) չխոչընդոտել ներդրողների լիազոր ներկայացուցչի կողմից իր իրավունքների և պարտականությունների իրականացմանը:

6. Արժեթղթավորման հիմնադրամի պարտավորությունները մարվում են նրա լուծարային միջոցների հաշվին՝ սույն օրենքի 42-րդ հոդվածին համապատասխան:

–

~~Հոդված 42. Արժեթղթավորման հիմնադրամի լուծարումը սնանկության հիմքով~~

~~1. Սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետում նշված հիմքի առկայության դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում արժեթղթավորման հիմնադրամի սնանկության դիմում է ներկայացնում դատարան: Արժեթղթավորման հիմնադրամի նկատմամբ սնանկության վարույթ կարող է հարուցվել բացառապես Կենտրոնական բանկի կողմից՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:~~

~~2. Արժեթղթավորման հիմնադրամի սնանկության գործերը քննվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին:~~

~~3. Դատարանի կողմից արժեթղթավորման հիմնադրամի սնանկության մասին գործի քննության ժամանակ կիրառվում է միայն լուծարային վարույթ: Կենտրոնական բանկի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը քննում է գործը երեք աշխատանքային օրվա ընթացքում: Դատարանը որոշում է կայացնում Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ: Դատարանը մերժում է Կենտրոնական բանկի դիմումը, եթե Կենտրոնական բանկը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգի խախտումներով:~~

~~4. Արժեթղթավորման հիմնադրամի սնանկության մասին որոշում կայացնելիս դատարանը նշանակում է նաև լուծարային կառավարիչ՝ Կենտրոնական բանկի կողմից ներկայացված թեկնածուների թվից:~~

~~5. Դատարանի կողմից Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից լուծարային կառավարչին են անցնում արժեթղթավորման հիմնադրամի գործունեության կառավարման լիազորությունները:~~

~~6. Արժեթղթավորման հիմնադրամի պարտավորությունները մարվում են նրա լուծարային միջոցների հաշվին հետևյալ հերթականությամբ՝~~

~~1) առաջին՝ լուծարման գործընթացի իրականացման համար կատարված ծախսերը, այդ թվում՝ լուծարային կառավարչի վարձատրությունը.~~

~~2) երկրորդ՝ ներդրողների պահանջները՝ ազդագրում սահմանված առաջնահերթությամբ.~~

~~3) երրորդ՝ այլ անձանց պահանջները, որոնք, ըստ սույն օրենքի, չեն հանդիսանում նախաձեռնող կամ վաճառող, և որոնց նկատմամբ արժեթղթավորման հիմնադրամն ունի պայմանագրային պարտավորություններ.~~

~~4) չորրորդ՝ նախաձեռնողի կամ վաճառողի պահանջները, որոնց նկատմամբ արժեթղթավորման հիմնադրամն ունի պայմանագրային պարտավորություններ.~~

~~5) հինգերորդ՝ ցանկացած այլ պարտատերերի պահանջներ.~~

~~6) վեցերորդ՝ մնացած միջոցների բաշխումը նրա հիմնադիրների միջև՝ ըստ ներդրումների համամասնության.~~

Գ Լ Ո Ւ Խ 9

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Հոդված 43. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: